


---

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 190 էջ:

2015-ի մարտի 11-ին լրացավ հայ դասական, հասարակական գործիչ, 1915-ի Վանի հերոսամարտի ակտիվ մասնակից, XIX–XX դարերի հայ կերպարվեստի ռեալիստական ուղղության ականավոր ներկայացուցիչ Փանոս Թերլեմեզյանի (1865–1941) 150-ամյա հոբելյանը: Նշանակալի է Թերլեմեզյանի ավանդը հայ կերպարվեստի, հասարակական-մշակութային կյանքի զարգացման գործում, և պատահական չէ, որ դեռ նրա կյանքի օրոք, մահից օրեր առաջ՝ ապրիլի 30-ին, ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի որոշմամբ նրա անունով է անվանակոչվում Երևանի գեղարվեստա-արդյունաբերական (Գեղարդ) տեխնիկումը, որն այսօր հայտնի է որպես Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ:



Հոբելյանին ընդառաջ ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ «Գիտություն» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց արվեստագիտության թեկնածու, Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, Երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահ Մերի Կիրակոսյանի «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը: Աշխատության պատասխանատու խմբագիրն է այժմ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը: Գիրքը հրատարակվել է ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Փ. Թերլեմեզյանի կյանքի և ստեղծագործության մասին գրվել է մենագրություն (Ե. Մարտիկյան. Փանոս Թերլեմեզյան, Երևան, 1964, 101 էջ), հրատակվել են բազմաթիվ հոդվածներ, կատալոգներ, պատկերագրքեր: Սակայն Մ. Կիրակոսյանն ունի իր ասելիքը, նոր խոսքը. նա գիտական շրջանառության մեջ է դնում նկարչի կյանքին և ստեղծագործությանն առնչվող նոր փաստեր, քչերին հայտնի կամ կորսված համարվող նորահայտ ստեղծագործություններ (դրանք պահվում են Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարաններում, Էջմիած-

նի Մայր Տաճարի Նոր վեհարանում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում), առաջին անգամ ընթերցողին է ներկայացնում Թերլեմեզյանի գրական ժառանգությունը, նոր էջեր նրա հասարակական գործունեությունից, նաև անկողմնակալ արվեստաբանական վերլուծության ենթարկում նկարչի ստեղծագործությունը՝ անցկացնելով հետաքրքիր և տեղին զուգահեռներ ժամանակի ֆրանսիական գեղանկարիչների [չմոռանանք, որ Թերլեմեզյանը սովորել է նաև Փարիզում՝ Ռոդոլֆ Ժուլիանի մասնավոր ակադեմիայում (1899–1904)], ինչպես նաև սովետահայ կերպարվեստի կարկառուն ներկայացուցիչների գործերի հետ [1928-ից նկարիչը հաստատվել է Խորհրդային Հայաստանում և ապրել մինչև իր կյանքի ավարտը]: Մի խոսքով՝ Մ. Կիրակոսյանը համակողմանի և ամբողջական ուսումնասիրության է ենթարկել Փ. Թերլեմեզյանի կյանքն ու ստեղծագործությունը, ինչը հենց մենագրության գլխավոր նպատակն է:

Հեղինակը երկարամյա պրպտումների ընթացքում իր ուսումնասիրությունը հարստացրել է Հայաստանի Ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժնում գտնվող նկարչի ֆոնդերի, Հայաստանի ազգային արխիվի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերի համապատասխան արխիվային վավերագրերով:

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Գունավոր 16 վերաստպություններից բաղկացած ներդիրը թույլ է տալիս մուտք գործել թերլեմեզյանական աշխարհը, որտեղ կողք կողքի հանգրվանած բնանկարները, դիմանկարները, նատյուրմորտները և այլ գործերը լռաձայն վկայում են բազմաժանր նկարչի վարպետության ու տաղանդի մասին: Տեքստամիջյան սև-սպիտակ վերաստպությունները ներկայացնում են կորսված համարվող, բայց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Աղթամարի Մբ. Խաչ եկեղեցու հարթաքանդակների արտանկարները, որոնք հեղինակի ճշգրիտ բնութագրմամբ, աչքի են ընկնում «կատարողական բարձր վարպետությամբ, գծանկարի ճշգրիտ կառուցմամբ և ռեալիստական ռճի խստապարզ ձևերով ...» (էջ 92):

Երկլեզու՝ ռուսերեն և անգլերեն ամփոփումներն օտարալեզու ընթերցողին են ներկայացնում գրքի ընդհանուր բովանդակությունը: Օգտագործված աղբյուրների և գրականության հարուստ ցանկը (295 անուն) ոչ միայն պատկերացում է տալիս հեղինակի կատարած աշխատանքի մասին, այլև մասնագետների, ընթերցողների համար արժեքավոր ուղեցույց է հանդիսանում:

«Փանոս Թերլեմեզյանի կյանքի ուղին» խորագիրը կրող առաջին գլուխը ներառում է երեք ենթագլուխ: Առաջին ենթագլխում՝ «Կենսագրություն», ներկայացված են էջեր նկարչի՝ վայրիվերումներով լի կյանքից. նրա ուսումնառության տարիները Պետերբուրգում և Փարիզում, թուրք կառավարության կողմից հետապնդման և

կալանավորման, ճամփորդությունների ու բաղձալի հայրենադարձության շրջափուլերը: Երկրորդ ենթագլխում՝ «Փանոս Թերլեմեզյանի մասնակցությամբ ցուցահանդեսները», հեղինակը ընթերցողի դատին է հանձնում Փ. Թերլեմեզյանի մասնակցությամբ ցուցահանդեսների համալրված ու ամբողջական ժամանակագրությունը: Փ. Թերլեմեզյանը մասնակցել է 47 ցուցահանդեսների, որոնցից վեցն անհատական էին [Նյու Յորք, Ֆրեզնո, Երևան (երկու անգամ), Թիֆլիս, Մոսկվա]: Երրորդ ենթագլուխը՝ «Փանոս Թերլեմեզյանը և Կոմիտասը», նվիրված է Կոմիտասի և Թերլեմեզյանի բազմամյա ընկերությանն ու փոխհարաբերություններին: Հայտնի է, որ Թերլեմեզյանը մեծ ակնածանք է տաժել Կոմիտասի հանդեպ, ում հետ նրա բարեկամությունն սկսվել էր 1910-ից: Նկարչի ջերմ զգացմունքներն առավելագույնս արտացոլում են Կոմիտասին նվիրված նրա գծանկարչական աշխատանքները և յուղանկարները, այդ թվում՝ «Կոմպոզիտոր Կոմիտասի դիմանկարը» (1913), «Կոմիտասը գետափին» (1911) և այլն:

Աշխատության երկրորդ գլուխը՝ «Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունը», բաղկացած է չորս ենթագլուխներից՝ «Վաղ շրջան (1900–1915 թթ.)», «Միջին շրջան (1916–1927 թթ.)», «Խորհրդային շրջան (1928–1940 թթ.)» և «Դիմանկարը և նատյուրմորտը Փանոս Թերլեմեզյանի արվեստում»: Փ. Թերլեմեզյանի ստեղծագործության վերլուծությունը հեղինակը խարսխում է արվեստագիտության մեջ լայնորեն կիրառվող նկարագրական, քննական-համեմատական, ոճաբանական և ձևաբանական մեթոդների ամուր հենքի վրա: Հարուստ է Թերլեմեզյանի հեղինակած դիմանկարների շարքը՝ սկսած աշխատավորներից, գեղջուկներից մինչև հայ մտավորականներ, այդ թվում՝ Գևորգ Բաշինջաղյան (1900), Արշակ Ֆեթվաճյան (1906), Գիգո Շարբաբյան (1910), Խրիմյան Հայրիկ (1904, չի պահպանվել), Կոմիտաս (1911, 1913), Արշակ Չոպանյան (1928), Ռոմանոս Մելիքյան (1928), Հրաչյա Աճառյան (1928), Ավետիք Բսահակյան (1928), Վահրամ Ալազան (1932), Ակսել Բակունց (1932), Գուրգեն Մահարի (1932) և այլն:

Փ. Թերլեմեզյանն «իր արվեստի ձևավորման սկզբում ընտրեց գեղանկարչության ռեալիստական, իրապաշտական ուղղությունը, որին անդավաճան մնաց իր ողջ ստեղծագործական ուղու ընթացքում» (էջ 161): Ժամանակի ընթացքում նկարչի նախասիրած բնանկարի ժանրում նրա նկարելաձևը, այնուամենայնիվ, ենթարկվում է որոշ փոփոխությունների: Այսպես, վաղ շրջանի բնապատկերները կրում են ակադեմիզմի կնիքը, որը հաղթահարվում է հատկապես միջին փուլում (1916-ից սկսած)՝ իմպրեսիոնիզմի, ռոմանտիզմի չափավոր ազդեցությամբ ստեղծված տեսարաններում, և որոշակի փոփոխության է ենթարկվում արդեն ուշ՝ խորհրդային շրջանում սոցոռեալիզմից ներշնչված էպիկական ու մոնումենտալ արդյունաբերական բնանկարներում: Փ. Թերլեմեզյանը արդյունաբերական բնանկարի հիմնադիրներից էր:

«Փանոս Թերլեմեզյանի գրական, հասարակական և հայրենասիրական գործունեությունը» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից՝ «Փանոս Թերլեմեզյանի գրական ժառանգությունը», «Փանոս Թերլեմեզյանի հասարակական գործունեությունը» և «Փանոս Թերլեմեզյանի մասնակցությունը Վանի հերոսամարտին»: Հեղինակը լուսաբանում է արվեստագետի հասարակական-քաղաքական և մշակութային գործունեությունը, նրա մասնակցությունը 1890-ականների Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական պայքարին, 1915 թ. ապրիլյան Վանի հերոսամարտին: Ներկայացվում է Թերլեմեզյանի ներդրումը մշակութային տարբեր միությունների ստեղծմանը. նա 1916-ին Թիֆլիսում մասնակցում է Հայ արվեստագետների միության կազմակերպմանը, 1917-ին Դոնի Ռոստովում հիմնում է այդ միության մասնաճյուղը, 1921-ին Կ. Պոլսում համագործակցում Հայ արվեստի տան կազմավորմանը՝ դառնալով դրա նկարչական բաժնի ատենապետը և այլն: Թերլեմեզյանը Հայաստանի կերպարվեստագետների ընկերության պատվավոր անդամ էր (1928), Հայաստանի հեղափոխական նկարիչների ասոցիացիայի անդամ (1930):

Սույն գլխում հեղինակը դիտարկում է նաև Թերլեմեզյանի՝ քչերին հայտնի գրական ժառանգությունը՝ հրատարակված, ինչպես նաև անտիպ էլույթներն ու հոդվածները, որոնց մի մասը պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժնում: «Նկարիչը գրական 15 հրապարակումներ ունի, – գրում է Մ. Կիրակոսյանը, – որոնցից շատերում առաջադրված են արվեստագետին հուզող ինչպես ստեղծագործական, գեղարվեստական ու գեղագիտական, այնպես էլ ազգային՝ հասարակական ու քաղաքական խնդիրներ» (էջ 162): Մի քանի լեզուների տիրապետող Թերլեմեզյանը զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ, մասնավորապես, նա պարսկերենից հայերեն է թարգմանել պարսից բանաստեղծ Բաբա Թահեր Օրիանի քառյակները: Նկարչի հավաստմամբ՝ այս թարգմանությունն արժանացել է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հավանությանը, ով «իր հորդորներով օժանդակել է վերջինիս հրատարակմանը» (էջ 124):

Երկար պրպտումների և ուսումնասիրությունների արդյունքում ստեղծված այս հրաշալի գիրքը հասցեագրված է ինչպես մասնագետներին, այնպես էլ արվեստասեր հանրությանը, կարդացվում է մեկ շնչով ու հետաքրքրությամբ: Այն գրված է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով և մատչելի լեզվով: Ցավալի է, որ կան տեխնիկական վրիպումներ, չկա գրքի բովանդակության էջը:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ